

լսելու համար Երեմիայի «մանկամեռ և ճղակոտոր» զաւակին վրայ եղբրամայրերու հիւսած ողբերը և համազգիներու և նոյնիսկ օտարներու այլ և այլ լեզուներով խօսած ներբողները (էջ 487 և 488): Ամէնքը հառաչածայն հեկեկանքներ կ'արձակեն ու կ'ըսեն. «Արդ մենք զո՞րն լացցուք, զեզեա՞նն ի դազաղին՝ թէ զթալիթիեալ միջաբեկեալ ծնողն ի վերայ գլխին» (էջ 486): Կը գրէ Երեմիա իր առաջին նամակին մէջ. Ո՛ր էր թէ Յիսուս աշխարհի վրայ գտնուէր ու ինք անոր ոտքերուն փարելով լար ու լացընէր, ու տանէր զայն իր որդւոյն գերեզմանին մօտ, որպէսզի՝ ինչպէս երբեմն Ղազարոսի՝ անոր ալ ձայնէր, Գրիգորիէ՛, արի՛ եկ արտաքս (անդ):

Այս հարուածէն այնքան կ'ընկճուի Երեմիա, որ Յիթէ երկինքն ու երկիրը ձայն տան ինձ, կը գրէ, զիս չեն կարող սփոփել: Երկինքն ու երկիրը, կ'աւելցնէ քիչ մը անդին, բանտի պէս կ'երեւին ինձ, վասնզի խաւարեցաւ իմ առաւօտեան աստղս (էջ 489 և 491):

Իր երկրորդ նամակին մէջ կը գրէ՝ թէ իր զաւակը հողին յանձնելէն վերջ ալ՝ «մեծամեծ» այսինքն տօն օրերուն թալկացեալ անձամբ և «երես ի քարշ գաւազանաւ» ու ծովի կողմէն կ'երթայ անոր գերեզմանին վրայ Պալքը՝ «ողբարանաց և աշխարանաց, գուժի և լալականաց» այդ վայրը (Յաւել. էջ 488):

Զէլէպի իր առաջին նամակին մէջ (էջ 487) թուրքերէն լեզուով թուեւով Գրիգորիս վարդապետի ձիրքերը՝ կը գրէ. «Անոր հիանալի վճիռ լեզուն, ազգուատենաբանութիւնը, իմաստուն և սահուն խօսուածքը, գերազանց ու սքանչելի պերճախօսութիւնը և փափուկ ոճը անտեսանելի ու անլսելի դարձան, անոր փայլուն արժանիքները մոմի պէս մարեցան, այդ բուրուֆնաւէտ ու զուարթազին ծաղիկը խամրեցաւ ու կորսնցուց իր անուշահոտութիւնը» (էջ 487): Իր չոր-